



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 537-Ա

04 հոկտեմբերի 2022 թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Վարդենիս համայնքի Սոթք և Կութ բնակավայրերի վնասված բնակելի տներին հասցված վնասները փոխհատուցելու համար Սոթք բնակավայրում 78/յոթանասունութ/ վնասված բնակարանների վերականգնման համար հատկացնել 34829620/երեսունչորս միլիոն ութ հարյուր քսանինը հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ և Կութ բնակավայրում 8/ութ/ վնասված բնակարանների վերականգնման համար հատկացնել 2348950/երկու միլիոն երեք հարյուր քառասունութ հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, համաձայն հավելվածի:
2. Բնակելի տներին հասցված վնասների գնահատված արժեքի 50 տոկոսը տրամադրել բնակիչներին՝ վերականգնման աշխատանքները սկսելու համար, իսկ մնացած մասը տրամադրել աշխատանքների ընթացքը ուսումնասիրելուց հետո:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ՖՍՏ վարչությանը՝ սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի 50 տոկոսի վճարում:

04.10.2022



ՄԱՐԶՊԵՏ՝

Подпись: САРԳՏՅԱՆ ԿԱՐԵՆ 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ